EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Cooperation

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
THE MINISTRY OF ECONOMY OF THE RA

Austrian Development Agency

WOMEN IN GREEN AGRICULTURE SUCCESS STORIES

ԿԱՆԱՅՔ ԿԱՆԱՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Cooperation

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
THE MINISTRY OF ECONOMY OF THE RA

Austrian Development Agency

The articles were prepared with the support of the EU-GAIA project within the framework of the "Women in Green Agriculture" campaign. The goals is to popularize the successful experience of women in the development of green agriculture in Armenia and to contribute to the expansion of women's participation in creating a competitive and efficient agriculture based on green technologies and science.

About EU-GAIA project

The EU Green Agriculture Initiative (EU-GAIA) is one of the largest sustainable agricultural project in Armenia, funded by the European Union (EU) and co-financed by the Austrian Development Cooperation (ADC)). The project is implemented by the Austrian Development Agency (ADA). The project government counterpart is the RA Ministry of Economy. The Project is aimed at facilitating the development of sustainable, inclusive, innovative and market-oriented agribusinesses, especially in Lori, Tavush and Shirak regions, and promote organic agriculture all around Armenia.

This publication was produced with the financial support of the European Union and the Austrian Development Cooperation. Its contents are the sole responsibility of the author and do not necessarily reflect the views of the European Union and the Austrian Development Agency.

© 2023 Austrian Development Agency. All rights reserved.

Licensed to the European Union under conditions.

Հոդվածները պատրաստվել է EU-GAIA ծրագրի աջակցությամբ՝ «Կանայք կանաչ գյուղատնտեսության մեջ» քարոզարշավի շրջանակներում, որի նպատակն է ներկայացնել հանրությանը Հայաստանի կանանց հաջողված փորձը կանաչ գյուղատնտեսությունում և նպաստել կանանց մասնակցության ընդլայնմանը կանաչ տեխնոլոգիաների և գիտության վրա հիմնված մրցունակ և արդյունավետ գյուղատնտեսության զարգացման գործում:

EU-GAIA ծրագրի մասին

«Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) Հայաստանի կայուն գյուղատնտեսության ոլորտի ամենախոշոր ծրագիրից մեկն է, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության (ԵՄ) կողմից և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) կողմից: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) կողմից: Կառավարության կողմից ծրագրի գործընկերն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Ծրագիրն ուղղված է նպաստելու կայուն, ներառական, նորարարական և շուկայահեն կանաչ ագրոբիզնեսի զարգացմանը մասնավորապես Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում և խթանել օրգանական գյուղատնտեսությունն ամբողջ Հայաստանում:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները:

© 2023 Ավստրիական զարգացման գործակալություն:

Բոլոր իրավունքները պաշտպանված են.

Արտոնագիր՝ Եվրոպական միություն

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

HAYKUSH HOVSEPYAN

The green farmer of the land of the sun

Having been engaged in the cultivation of blood oranges for years, the family of Haykush Hovsepyan from Meghri decided to switch from traditional to green agriculture in line with the requirements of the time and develop it. In this matter, the Austrian Development Agency came to the aid of the entrepreneur through the "Green Agriculture Initiative in Armenia" (EU-GAIA) project, which is co-financed by the European Union and the Austrian Development Cooperation.

They became interested in modern agriculture after Haykush's husband learned about the benefits of green and organic agriculture in Israel. According to Haykush, this became the basis for them to switch to green agriculture and apply to the "Green Agriculture Initiative in Armenia" (EU-GAIA) project. Thanks to the project, they got a tractor, hot water through solar heating and crates for transporting blood oranges. All this greatly eased the production work.

After becoming a beneficiary of the Austrian Development Agency, they also began to master market innovations better.

"They helped a lot, especially with marketing issues; they created a brand for me, we are applying the knowledge gained. It is true that the certification process is difficult in Armenia, but little by little we are achieving success. We have applied for an organic producer's certificate, for now we only hope for fresh fruit production, which we will receive at the end of this year, after that we will get the certificate for processing," she says.

According to the producer of green agricultural products, they do not use pesticides at all. Productivity of fresh fruit reaches up to 40 tons, and of dry fruits 15-17 tons. Although the family is involved in the business to its full potential, hired workers come to help during the season, both harvesting and helping with processing. They sell the produce by cooperating with the major dry fruit dealers of Armenia. They do not engage in retail trade, they sell their products wholesale.

"I am not afraid of any work. Men and women of our household work equally. We have a plan to build an old Armenian wine vault for the future, we have reserved an area. We will make it a center of tourism development. Due to the situation, we are a bit slow in doing that, but I am always optimistic, I am sure that Meghri will always stand."

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ՀԱՅԿՈՒՇ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Արևի երկրի կանաչ գյուղատնտեսը».

Մեղրեցի Հայկուշ Հովսեփյանի ընտանիքը տարիներ շարունակ զբաղվելով արքայանարնջի մշակությամբ՝ որոշեց ժամանակի պահանջներին համապատասխան ավանդականից կանաչ գյուղատնտեսության անցնել ու այն զարգացնել: Այս հարցում ձեռներեցին օգնության հասավ Ավստրիական զարգացման գործակալությունը՝ Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրով:

Ժամանակակից գյուղատնտեսությամբ սկսեցին հետաքրքրվել այն բանից հետո, երբ Հայկուշի ամուսինը Իսրայելում ծանոթացավ կանաչ և օրգանական գյուղատնտեսության առավելություններին: Հայկուշի խոսքով՝ դա հիմք դարձավ, որ իրենք էլ անցնեն կանաչ գյուղատնտեսության և դիմեն «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրին: Ծրագրի շնորհիվ տրակտոր ունեցան, արևային մարտկոցով տաք ջուր և արքայանարնջի տեղափոխման համար արկղեր: Այս ամենը զգալիորեն թեթևացրեց արտադրության աշխատանքը:

Ավստրիական զարգացման գործակալության շահառու դառնալուց հետո սկսեցին նաև առավել լավ տիրապետել շուկայի նորարարություններին:

«Հատկապես մարքեթինգի հարցերով ինձ շատ օգնեցին, ապրանքանիշ են ստեղծել, ստացած գիտելիքները կիրառում ենք: Ճիշտ է, Հայաստանում սերտիֆիկացման գործընթացը բարդ է, բայց կամաց-կամաց հասնում ենք հաջողությունների: Դիմել ենք օրգանական արտադրողի սերտիֆիկատ ստանալու, առայժմ միայն թարմ մրգի արտադրության սերտիֆիկատի հույս ունենք, որ այս տարվա վերջին կստանանք, դրանից հետո արդեն վերամշակման համար կհանենք սերտիֆիկատը,» ասում է նա:

Կանաչ գյուղմթերք արտադրողի խոսքով թունաքիմիկատներ ընդհանրապես չեն օգտագործում: Թարմ մրգի տեսքով արտադրողականությունը հասնում է մինչև 40 տոննայի, իսկ չրերի դեպքում՝ 15-17 տոննայի: Թեև ընտանիքը իր ամբողջ ներուժով ընդգրկված է բիզնեսի մեջ, սեզոնին օգնության են հասնում վարձու աշխատողներ, որոնք թե՛ բերքն են հավաքում, թե՛ օգնում վերամշակման հարցում: Իրացումն ապահովում են՝ համագործակցելով Հայաստանի խոշոր չրագործների հետ: Մանրածախ առևտրով չեն զբաղվում, մեծածախ են իրացնում իրենց արտադրանքը:

«Ես ոչ մի աշխատանքից չեմ վախենում: Մեր տան տղամարդիկ և կանայք հավասար աշխատում են: Ապագայի համար հին հայկական գինետուն կառուցելու ծրագիր ունենք, տարածք ունենք պահած, տուրիզմի զարգացման կենտրոն ենք դարձնելու: Իրավիճակից ելնելով՝ մի քիչ ձգձգում ենք, բայց ես լավատես եմ, համոզված եմ, որ Մեղրին միշտ էլ կանգուն կլինի»:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ARMINE MARTIROSYAN

"We decided to take on the role of a pioneer of green agriculture"

Armine Martirosyan, who is engaged in poultry farming in Kamaris, is an economist by profession, but she was attracted by agriculture from certain moment and decided to try her hand in that field. As a result, she created the "Kamaris" family farm, which today is slowly moving forward in the market, assuming the role of a pioneer of green and organic agriculture in the community.

"About ten years ago, my brother and I had an idea to develop agribusiness and we decided to engage in poultry farming. We acquired a piece of land and although it was very difficult at first, but by learning from our mistakes, we were able to manage the poultry farm properly and now we already have 1,500 birds. I remember many people said that you are a young girl, why you are doing such a thing, you won't be able to succeed, etc. In the beginning, of course, the expectations were high, there are also moments when you break down if the business does not have a steady rise, but in the process we become hardened and endure because our buyers have confidence in us."

She says that the idea of practicing green agriculture arose from the need to be competitive in the market:

- Studying the market, I realized that the only solution to overcome all this is to provide organic and ecologically clean food through green and organic agriculture. We decided to move on the path of certified organic agriculture and take the role of a pioneer in our environment in that direction.

According to Armine, in the business plan submitted for the grant competition of the "Green Agriculture Initiative in Armenia" (EU-GAIA) project, they planned to engage in the production of organic grain for chicken feed, and in the next stage to carry out the certification of chicken keeping conditions. Thanks to the support of the EU-GAIA project, they received solar panels and a motor block with its fittings. The project have also provided financial support for rebranding their brand.

She says that a rather complicated and long process is expected; they started with fodder, for now they are engaged in growing certified organic grain, and they grow barley and spelt on one hectare of land. The tests have been done, the goal is to expand the size of the land and achieve self-sufficiency in terms of fodder.

ԱՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Որոշեցինք կանաչ գյուղատնտեսության պիոների դերը ստանձնել»

Կոտայքի մարզի Կամարիս համայնքում թռչնաբուծությամբ զբաղվող Արմինե Մարտիրոսյանը մասնագիտությամբ տնտեսագետ է, բայց ինչ-որ պահից սկսած նրան գրավեց գյուղատնտեսությունը, որոշեց ուժերը փորձել այդ ոլորտում: Արդյունքում ստեղծեց «Կամարիս» ընտանեկան ֆերման, որն այսօր դանդաղ քայլերով առաջ է շարժվում շուկայում՝ կանաչ և օրգանիկ գյուղատնտեսության պիոների դեր ստանձնելով համայնքում:

«Մոտ տասը տարի առաջ իմ ու եղբորս մոտ ագրոբիզնեսը զարգացնելու միտք առաջացավ, և որոշեցինք թռչնաբուծությամբ զբաղվել: Հողակտոր ձեռք բերեցինք, ու թեև սկզբում շատ դժվար էր, բայց սխալների վրա սովորելով կարողացանք թռչնաֆերման ճիշտ կառավարել ու հիմա արդեն 1500 թև թռչուն ունենք: Հիշում եմ՝ շատերն ասում էին՝ երիտասարդ աղջիկ ես, ինչո՞ւ ես նման բան անում, մեկ է՝ չես կարողանալու հաջողել և այլն: Սկզբում, իհարկե, ակնկալիքները շատ էին, նաև պահեր են լինում, որ կոտրվում ես, եթե բիզնեսը կայուն վերելք չի ապրում, բայց ընթացքում կուժվել ու դիմանում ենք, քանի որ մեր գնորդները վստահություն ունեն մեր նկատմամբ»,- ասում է Արմինեն:

Պատմում է, որ կանաչ գյուղատնտեսությամբ զբաղվելու գաղափարը շուկայում մրցունակ լինելու անհրաժեշտությունից է առաջացել.

«Ուսումնասիրելով շուկան հասկացա, որ այս ամենը հաղթահարելու միակ լուծումը կանաչ և օրգանական գյուղատնտեսության միջոցով օրգանիկ և մաքուր սնունդ ապահովելն է: Որոշեցինք օրգանական սերտիֆիկացված գյուղատնտեսության ճանապարհով շարժվել և այդ ուղղությամբ մեր շրջապատում պիոների դերը ստանձնել:»

Արմինեի խոսքով՝ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի դրամաշնորհային մրցույթին ներկայացված բիզնես ծրագրով նախատեսել էին հավերի կերի համար օրգանիկ հացահատիկի արտադրությամբ զբաղվել, իսկ հաջորդ փուլով հավերի պահման պայմանների սերտիֆիկացում իրականացնել: EU-GAIA ծրագրի աջակցության շնորհիվ ստացան արևային վահանակներ, մոտոբլոգ՝ իր կցամասերով: Ծրագիրը նաև ֆինանսական աջակցություն է ցուցաբերել իրենց ապրանքանիշի վերաբրենդավորման մասով:

Ասում է՝ բավականին բարդ ու երկարատև գործընթաց է սպասվում, սկսել են կերերից, առայժմ օրգանիկ սերտիֆիկացված հացահատիկային բույսերի մշակությամբ են զբաղվում՝ մեկ հա հողատարածքում գարի և հաճար են աճեցնում: Փորձարկումներն արել են, նպատակն է՝ ընդարձակել հողատարածքը և կերի մասով ինքնաբավության հասնել:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

KARINE HERIKNAZYAN

"In growing asparagus, we chose to engage particularly women."

The family of Karine Heriknazyan and Artashes Karapetyan lives in Spitak community of Lori marz. Before marriage, Karine Heriknazyan never thought that there would be a job that would be as close to her heart as medicine. A pediatric rehabilitation specialist, who was in love with her profession, found two new loves at once: her husband and farming.

Today, they, husband and wife, manage the "Smart farm Spitak" company. She says that they do not have a single day of rest in the year, they do not like to be idle, they are not afraid of difficulties. At first, they engaged in animal husbandry, beef and pig breeding, they had greenhouses, they grew various crops, then biohumus production was added to it. Today, apart from all this, the focus of the family's attention is the production of valuable crops (Lavender and Aparagus) and in this matter they are supported by the "Green Agriculture Initiative in Armenia" (EU-GAIA) project, which is co-financed by the European Union and the Austrian Development Cooperation.

Karine says that when she heard about the "Green Agriculture Initiative in Armenia" (EU-GAIA) project, she did not think twice: she already had a ready-made idea, the support provided for bringing it to a professional level of development could be very valuable.

"Within the scope of the project, we were provided with a tractor, a plow, and other equipment for cultivating asparagus plantations, which really helped us a lot. Thanks to that, we were able to increase the annual batch to 120,000 seedlings," says Karine.

Mainly women are involved in the production of asparagus. Men help with hard, physical work, but nine women work in the greenhouses during the season.

"The work done by women is always distinguished by its meticulous approach. In addition, it is more difficult for women to find work in rural communities, and this work is not physically demanding, so we chose to involve women in this to ensure their employment. In addition to the fact that women have stable employment for several months, we also try to help them learn in the process and become professionals in their work because we are convinced that education is the guarantee of work efficiency", says Karine.

This green farming family does not just take care of itself. Asparagus seedlings, necessary training, counseling and mentoring are provided to farmers of already six regions. These farmers have already received their first full harvest this year. The couple hopes that soon their partnership network will cover the whole of Armenia.

ԿԱՐԻՆԵ ՀԵՐԻՔՆԱԶՅԱՆ

«Ծնեբեկ աճեցնելու գործում նախընտրեցինք ներգրավել հատկապես կանանց»

Լոռու մարզի Սպիտակ համայնքում է բնակվում Կարինե Հերիքնազյանի և Արտաշես Կարապետյանի ընտանիքը: Մինչև ամուսնությունը Կարինե Հերիքնազյանի մտքով անգամ չէր անցնի, որ կլինի մի գործ, որն իրեն նույնքան հոգեհարազատ կլինի, որքան իր բուն մասնագիտությունը՝ բժշկությունը: Մանկական վերականգնողաբանը, որ սիրահարված էր իր մասնագիտությանը, միանգամից երկու նոր սեր գտավ՝ ամուսնուն և հողագործությունը:

Այսօր ամուսիններով ղեկավարում են Smart farm Spitak ընկերությունը: Տարվա մեջ ոչ մի հանգիստ օր չունեն, պարապ մնալ չեն սիրում, դժվարություններից էլ չեն վախենում: Սկզբում զբաղվում էին անասնապահությամբ՝ տավարաբուծությամբ և խոզաբուծությամբ, ջերմոցներ ունեին, տարբեր մշակաբույսեր էին աճեցնում, հետո դրան գումարվեց կենսահումուսի արտադրությունը: Այսօր արդեն, այս ամենից զատ, ընտանիքի ուշադրության կենտրոնում արժեքավոր մշակաբույսերի՝ լավանդայի և ծնեբեկի արտադրությունն է, և այս հարցում նրանց աջակցում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագիրը:

«Ծրագրի շրջանակում մեզ տրամադրվեցին տրակտոր, գութան, ծնեբեկի պլանտացիաները մշակելու համար նախատեսված այլ տեխնիկա, որը իսկապես շատ մեծ աջակցություն եղավ մեզ համար: Դրա շնորհիվ կարողացանք տարեկան խմբաքանակը հասցնել 120 հազար սածիլի»,- պատմում է Կարինեն:

Ծնեբեկի մշակության գործում ներգրավված են հիմնականում կանայք: Ծանր, ֆիզիկական աշխատանքի դեպքում օգնում են տղամարդիկ, բայց սեզոնին 9 կին է աշխատում ջերմոցներում:

«Կանանց արած աշխատանքը միշտ առանձնանում է իր մանրակրկիտ մոտեցմամբ: Բացի այդ, կանանց համար գյուղական համայնքներում աշխատանք գտնելն ավելի բարդ է, իսկ այս աշխատանքը ֆիզիկապես ծանր չէ, ուստի մենք նախընտրեցինք դրա համար ներգրավել հենց կանանց, ապահովել նրանց զբաղվածությունը: Մենք նաև ջանում ենք, որ նրանք ընթացքում սովորեն, դառնան իրենց գործի պրոֆեսիոնալը, որովհետև համոզված ենք, որ կրթությունը աշխատանքի արդյունավետության գրավականն է»,- ասում է Կարինեն:

Կանաչ գյուղատնտեսությամբ զբաղվող այս ընտանիքը միայն իր մասին չի հոգում: Արդեն 6 մարզի ֆերմերների տրամադրել են ծնեբեկի սածիլներ, անհրաժեշտ ուսուցում, խորհրդատվություն և մենթորություն: Այդ ֆերմերներն այս տարի ստացել են իրենց առաջին լիարժեք բերքը: Ամուսինները հույս ունեն, որ շուտով իրենց գործընկերային ցանցը կպատի ամբողջ Հայաստանը:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

LENA SARGSYAN

"The important thing in agribusiness is to change the way people think."

David Davtyan and Lena Sargsyan, a young couple living in Stepanavan, have, over fifteen years of their joint life, proven by their example that work is creativity and that it gives real joy in life. Today, they are creating and implementing future-oriented business plans that will contribute to the prosperity of not only themselves, but also the community. A part of the couple's long-term plans is being implemented with the support of the "Green Agriculture Initiative" (EU-GAIA) project co-financed by the European Union and the Austrian Development Cooperation.

David and Lena learned about the project in 2021, and in 2022 they were already provided with a 180 square meter greenhouse, a drip system, a 5 kW solar panel and a motor block that loosens the soil. For the near future, they have planned to purchase a cold storage facility on their own, which is necessary to store broccoli and will also serve to store the food of other broccoli farmers.

"We fertilize the soil not with chemicals, but with manure," says David, "The first harvest we received is cucumbers, which we deliver to city supermarkets under the brand name "Taste and Enjoy". By the way, the demand for cucumbers is high, which makes us even more excited. Our goal is also to have a guest house, where guests will have the opportunity to use the produce of the greenhouse, personally pick and taste organic cucumbers and tomatoes, greens and berries."

According to David and Lena, they got the knowledge about the competent management of agriculture and greenhouse economy thanks to the courses organized by the Austrian Development Agency. According to them, the program not only educates, but also provides an opportunity to be in different greenhouses and gardens for the experience sharing purpose.

In that sense, Lena's participation in the agricultural course organized in the Republic of Austria and the "Biofach" exhibition held in Nuremberg, Germany, was particularly effective. She is convinced that such courses lead to a change in worldview, which the beneficiary later transfers to others in her environment. Lena returned from Austria with innovative business ideas, and she wants to introduce what she heard, learned and saw there in their business and community.

"Everything grows in our environment, we just have to work. In agribusiness, the important thing is to change the way people think, as well as the ability to competently sell your own products, and we gladly convey the acquired knowledge about that to fellow citizens who apply to us," says Lena.

ԼԵՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«Ագրոբիզնեսում կարևորը մարդկանց մտածելակերպի փոփոխությունն է»

Ստեփանավանում բնակվող երիտասարդ ամուսիններ Դավիթ Դավթյանը և Լենա Սարգսյանը համատեղ կյանքի 15 տարիների ընթացքում իրենց օրինակով են ապացուցում, որ աշխատանքը ստեղծագործություն է, և այն իրական ուրախություն է պարգևում կյանքում: Այսօր նրանք կազմել և իրագործում են ապագային միտված բիզնես ծրագրեր, որոնք նպաստելու են ոչ միայն իրենց, այլև համայնքի բարգավաճմանը: Ամուսինների հեռահար պլանների մի մասը կյանքի է կոչվում նաև Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի աջակցությամբ:

Դավիթն ու Լենան ծրագրի մասին տեղեկացան 2021-ին, իսկ 2022-ին արդեն նրանց տրամադրվեցին 180 քմ մակերեսով ջերմատուն, ոռոգման կաթիլային համակարգ, 5 կվտ հզորությամբ արևային մարտկոց և հողը փխրեցնող մոտոբլոկ: Առաջիկայում նախատեսել են սեփական ուժերով ձեռք բերել սառնարանային տնտեսություն, որն անհրաժեշտ է բրոկոլին պահելու համար և կծառայի նաև բրոկոլիի մշակմամբ զբաղվող այլ ֆերմերների մթերքի պահպանմանը:

«Մենք հողը պարարտացնում ենք ոչ թե քիմիական նյութերով, այլ գոմաղբով,- ասում է Դավիթը - Առաջին բերքը, որ ստացել ենք, վարունգն է, որը «թեստ ընդ ռեսթ» («Համտեսիր և վայելիր») ապրանքանիշով հանձնում ենք քաղաքի սուպերմարկետներին: Ի դեպ, վարունգի պահանջարկը մեծ է, ինչն ավելի է ոգևորում մեզ: Մեր նպատակն է ունենալ նաև հյուրատուն, որտեղ հյուրերը հնարավորություն կունենան օգտվելու նաև ջերմոցի բարիքներից, անձամբ կհավաքեն ու կհամտեսեն օրգանիկ վարունգն ու լոլիկը, կանաչեղենն ու հատապտուղները»:

Դավիթի և Լենայի խոսքով գյուղատնտեսության և ջերմոցային տնտեսության գրագետ վարման վերաբերյալ գիտելիքները ստացել են Ավստրիական զարգացման գործակալության կազմակերպած դասընթացներից: Նրանց դիտարկմամբ՝ ծրագիրը ոչ միայն կրթում է, այլև հնարավորություն տալիս փորձի փոխանակման նպատակով լինել տարբեր ջերմոցներում և այգիներում:

Այդ առումով արդյունավետ էր հատկապես Ավստրիայում գյուղատնտեսական թեմայով կազմակերպված դասընթացին և Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում տեղի ունեցած «Բիոֆախ» ցուցահանդեսին Լենայի մասնակցությունը: Լենան Ավստրիայից վերադարձել է նորարարական բիզնես գաղափարներով, այն, ինչ լսել, սովորել ու տեսել է, ցանկանում է ներդնել իրենց բիզնեսում ու համայնքում:

«Մեզ մոտ ամեն ինչ աճում է, մնում է աշխատել: Ագրոբիզնեսում կարևորը մարդկանց մտածելակերպի փոփոխությունն ու սեփական արտադրանքի գրագետ իրացման հմտությունն է, որի մասին ստացած մեր գիտելիքները սիրով տրամադրում ենք մեզ դիմող համաքաղաքացիներին,- ասում է Լենան»:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

NOYEMI BABAKHANYAN

"The important thing in agribusiness is to change the way people think."

Secondary school No. 1 of Nor Geghi community of Kotayk Marz is one of the 44 schools of the republic, which are included in the program for development of innovative agricultural capacities, including the creation of intensive gardens, implemented with the support of the United Nations World Food Program (WFP). And although the community has always been known for its traditional gardens, a considerable area of the school was dedicated to the creation of an intensive garden where students can be involved in agricultural activities and learn about modern green technologies.

The work on the creation of an intensive garden began within the framework of the "Establishment of intensive fruit and berry gardens in areas near schools" implemented by the NGO "Green Lane" with the support of the UN World Food Program.

"You should have seen how interested the students were in studying the agricultural equipment provided to the school and the latest technologies: laying drip system pipelines, anti-hail nets and installing tanks for rainwater, after which they started planting apple, cherry, and plum seedlings. The results of the harvest in the first year were satisfactory and caused great enthusiasm among the students", says the principal of the school.

According to her, the intensive garden near the school unites students, teachers and community residents, it has become a treasure trove for the application of modern technologies in green agriculture and horticulture for all.

"An important thing is the installation of a solar station within the framework of the project, which contributes to a significant reduction of electricity consumption. As a result, we increased the number of saplings using the saved means. Among the knowledge acquired by the students about soil cultivation, fertilizing the soil with Californian worms instead of traditional pesticides is a novelty and it is a novelty for the population of the community as well," says Noyemi Babakhanyan.

Noyemi Babakhanyan emphasizes the importance of involving students in modern agriculture in terms of their value system formation, choice of a future profession, creation of workplaces in the village and its development and prosperity. And it is not surprising that some of the graduates of the school receive secondary vocational education at the Nor Geghi State Agricultural College named after Academician G. Aghajanyan, and then continue their studies at the National Agrarian University of Armenia.

ՆՈՅԵՄԻ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

«Դպրոցամերձ ինտենսիվ այգին կանաչ գյուղատնտեսության շտեմարան է բոլորի համար»

Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցը հանրապետության այն 44 դպրոցներից է, որոնք ընդգրկված են ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսական նորարար կարողությունների զարգացման, այդ թվում՝ ինտենսիվ այգիների ներդրման ծրագրում: Ու թեև համայնքը մշտապես հայտնի է եղել իր ավանդական այգիներով, այնուհանդերձ, դպրոցի մի զգալի տարածք հատկացվեց ինտենսիվ այգու ստեղծմանը, որտեղ աշակերտները կարող են ներգրավված լինել գյուղատնտեսական գործունեության մեջ և գիտելիքներ ստանալ ժամանակակից կանաչ տեխնոլոգիաների մասին:

Ինտենսիվ այգու ստեղծման աշխատանքները սկսվեցին ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ «Կանաչ արահետ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Ինտենսիվ պտղատու և հատապտղային այգիների հիմնում դպրոցամերձ տարածքներում» ծրագրի շրջանակներում:

«Տեսնել էր պետք, թե աշակերտներն ինչ հետաքրքրությամբ էին ուսումնասիրում դպրոցին տրամադրված գյուղտեխնիկան, հետևում նորագույն տեխնոլոգիաների՝ կաթիլային համակարգի խողովակաշարերի անցկացման, հակակարկտային ցանցերի և անձրևաջրերի հավաքման համար նախատեսված բաքերի տեղադրման աշխատանքներին, որից հետո սկսեցին տնկել խնձորենու, կեռասենու, սալորենու տնկիներ: Առաջին տարում ստացված բերքի արդյունքները գոհացուցիչ էին, մեծ ոգևորություն առաջացրին աշակերտների շրջանում»,- ասում է դպրոցի տնօրենը:

Նրա խոսքով՝ դպրոցամերձ ինտենսիվ այգին միավորում է աշակերտներին, ուսուցիչներին և համայնքի բնակիչներին, այն կանաչ գյուղատնտեսության և այգեգործության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման շտեմարան է դարձել բոլորի համար:

«Կարևոր հանգամանք է ծրագրի շրջանակում արևային կայանի տեղադրումը, որը նպաստում է էլեկտրաէներգիայի ծախսի զգալի կրճատմանը: Հողի մշակման վերաբերյալ աշակերտների ձեռք բերած գիտելիքների թվում նորություն է նաև ավանդական թունաքիմիկատների փոխարեն կալիֆոռնիական որդերով հողի պարարտացումը, ինչը նույնպես նորություն է համայնքի բնակչության համար»,- պատմում է Նոյեմի Բաբախանյանը:

Նոյեմի Բաբախանյանը կարևորում է ժամանակակից գյուղատնտեսության մեջ աշակերտների ներգրավումը նրանց արժեհամակարգի ձևավորման, հետագա մասնագիտության ընտրության, գյուղում աշխատատեղ ստեղծելու և այն շենացնելու առումով: Ու զարմանալի չէ, որ դպրոցի շրջանավարտներից ոմանք միջին մասնագիտական կրթությունը ստանում են Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում, այնուհետև ուսումը շարունակում Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ZHANNA AVETISYAN

"We are known for "Sunny" strawberries"

In the Arevik community of Shirak Marz, everyone knows about the ecologically clean "Arevabyur" brand strawberry cultivated by Zhanna Avetisyan. It is the decoration of many people's tables everyday and especially on holidays. Although there is high demand for strawberries and much work in the greenhouse, Zhanna manages to successfully combine household chores, greenhouse and horticulture work and taking care of two children.

The desire to seriously engage in strawberry cultivation began when Zhanna's husband, Grigor Avetisyan, learned about the program implemented by the "Green Lane" NGO for agricultural support, which gave women the opportunity to engage in more competent cultivation of crops by providing them with free advice.

"Although I was very busy with household chores, I willingly agreed to join the program and I don't regret it. By participating in courses and meetings organized for the purpose of experience exchange, I learned not only to cultivate competently, but also gained knowledge about sales planning and marketing," says Zhanna.

Applying to the "Green Agriculture Initiative" (EU-GAIA) project co-financed by the European Union and the Austrian Development Cooperation, the couple presented a strawberry cultivation business plan. Having purchased a larger plot of land for the future greenhouse, the couple cleared it of garbage and stones and installed the greenhouse and cooling system with the support of the EU-GAIA project. Then, participating in the program of "Green Lane" NGO, they got refrigerators.

"When my husband and I were cleaning the newly bought land from stones and scrubs, some of the fellow villagers passing by looked at our work with a kind of regret, saying that nothing will come out of this land and that our efforts are pointless. However, we did not despair and persistently continued our work, bringing it to completion. And now that we look at what we created out of nothing, we are filled with pride. Now, when fellow villagers are interested in growing this or that crop, I gladly share my knowledge," says Zhanna.

Zhanna have decided to turn the area adjacent to the greenhouse, where vegetable crops are grown for daily use, into a strawberry greenhouse later.

Also, for the development of ecotourism, Zhanna and her husband decided to build a guest house, for which there is a separate area of 100 square meters. According to her, recently tourists have become interested in rural life, its lifestyle, cuisine and sights. So it is worth the effort.

"I have many plans, I will try to implement them gradually. The important thir peace and working people a and enjoy the results of their na.

ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«Մեզ «Արևաբույր» ելակով են ճանաչում»

Շիրակի մարզի Արևիկ համայնքում Ժաննա Ավետիսյանի մշակած էկոլոգիապես մաքուր «Արևաբույր» բրենդի ելակի մասին բոլորը գիտեն, այն շատերի ամենօրյա ու հատկապես տոնական օրերի սեղանի զարդն է: Թեև ելակի պահանջարկը մեծ է, ջերմոցում աշխատանքը՝ շատ, այնուհանդերձ Ժաննան կարողանում է հաջողությամբ համատեղել տնային տնտեսության, ջերմոցի և բոստանային մշակաբույսերի աճեցման աշխատանքներն ու երկու երեխաների խնամքը:

Ելակի մշակմամբ լրջորեն զբաղվելու ձգտումը սկսվեց այն պահից, երբ Ժաննայի ամուսինը՝ Գրիգոր Ավետիսյանը, տեղեկացավ գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի մասին, որը կանանց հնարավորություն էր տալիս զբաղվելու մշակաբույսերի առավել գրագետ մշակմամբ՝ անվճար խորհրդատվություն տրամադրելով:

Իմանալով Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն» (EU-GAIA) ծրագրի մասին՝ ամուսինները ելակի մշակման բիզնես ծրագիր ներկայացրին: Ավելի մեծ հողատարածք գնելով ապագա ջերմոցի համար՝ ամուսինները մաքրեցին այն աղբից ու քարերից և EU-GAIA ծրագրի աջակցությամբ հիմնեցին ջերմոցն ու տեղադրեցին հովացման համակարգը: Այնուհետև «Կանաչ արահետ» ՀԿ-ի ծրագրին մասնակցելով՝ ձեռք բերեցին սառնարաններ:

«Երբ ես ու ամուսինս նոր գնած հողամասը մաքրում էինք քարերից ու մացառներից, անցնող-դարձող համագյուղացիներից ոմանք մի տեսակ ափսոսանքով էին նայում մեր աշխատանքին, ասելով, թե այս հողից ոչինչ դուրս չի գա, ու մեր ջանքերն իզուր են: Սակայն մենք չէինք հուսահատվում ու համառորեն շարունակում էինք մեր գործը՝ հասցնելով այն ավարտին: Այսօր, երբ համագյուղացիները հետաքրքրվում են այս կամ այն մշակաբույսի աճեցմամբ, սիրով կիսվում եմ իմ գիտելիքներով»,- ասում է Ժաննան:

Ջերմոցին կից հողատարածքը, որտեղ առօրյա օգտագործման համար բոստանային մշակաբույսեր են աճեցնում, Ժաննան հետագայում որոշել է վերածել ելակի ջերմոցի:

Նաև էկոտուրիզմի զարգացման համար Ժաննան ամուսնու հետ որոշել է կառուցել հյուրատուն, որի համար 100 քմ մակերեսով առանձին տարածք կա: Նրա խոսքով՝ վերջին շրջանում զբոսաշրջիկները հետաքրքրված են գյուղական կյանքով, նրա կենցաղով, խոհանոցով ու տեսարժան վայրերով: Ուրեմն փորձել կարելի է:

«Ծրագրեր շատ ունեմ, կփորձեմ աստիճանաբար իրագործել: Կարևորն այն է, որ խաղաղություն լինի, ու աշխատող մարդը հասնի իր նպատակին, վայելի իր աշխատանքի արդյունքը»,- ասում է Ժաննան:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ANI ASATURYAN'S

green dream

The love and care for agriculture was transferred to Ani Asaturyan since childhood from her parents, who were engaged in growing crops, livestock and beekeeping. After graduating from the agribusiness and marketing department of the Agrarian University of Armenia, Ani became interested in greenhouse farming and had the idea of owning a greenhouse. By participating in the grant competition announced by the Austrian Development Agency within the framework of the "Green Agriculture Initiative in Armenia" (EU-GAIA) project, Ani achieved her goal: the greenhouse was installed in 2021 with the organization's support.

According to the presented program, Ani planned to organically cultivate non-traditional crops: arugula, kale, Italian mint, Italian basil, and rosemary.

"I knew that these crops were unfamiliar to our consumers, but no matter how risky it was, I decided to cultivate them," says Ani, "I remember when they started cultivating broccoli in Armenia, and many people thought it was tasteless, but today 70-80% of the population uses it. The same was said about arugula, that it will not be consumed, but I decided to see for myself and it turned out that you should not be guided by other people's opinions."

Ann posted the announcement of her own product on her Facebook platform under the name Greendream, later after rebranding with the support of the EU-GAIA project, it was called Greenmood. Not only the name was changed, but also the logo and packaging. As a result of rebranding, product consumption is carried out in reliable and environmentally friendly kraft paper bags printed with the new logo.

"I really like the project of the Austrian Development Agency because it supports not only financially, but also promotes business establishment and competent management through training courses, increases product and brand recognition by organizing agricultural product festivals," says Ani.

In order to meaningfully use the area adjacent to the greenhouse, Ani created a beautiful garden with apple, almond, walnut, and hazelnut saplings purchased from different nurseries. The garden is still irrigated with piped water, but it will be replaced by a drip system next year.

Ani's dream is not limited to a greenhouse and a garden. She plans to develop rural tourism. For this purpose, a cabin has already been placed in the territory of the greenhouse, which will later become a tea house.

ԱՆԻ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ

կանաչ երազանքը

Գյուղատնտեսության նկատմամբ սերն ու հոգատարությունն փոխանցվել են Անի Ասատուրյանին մանկուց՝ մշակաբույսերի աճեցմամբ, անասնապահությամբ ու մեղվապահությամբ զբաղվող ծնողներից:

Հայաստանի ագրարային համալսարանի ագրոբիզնես և շուկայաբանություն բաժինն ավարտելուց հետո Անին հետաքրքրվեց ջերմատնային տնտեսությամբ, և իր մոտ ծագեց սեփական ջերմատուն ունենալու գաղափարը: Մասնակցելով Ավստրիական զարգացման գործակալության «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակում հայտարարված դրամաշնորհային մրցույթին՝ Անին հասավ իր նպատակին՝ 2021 թվականին կազմակերպության աջակցությամբ հիմնվեց ջերմատունը:

Ըստ ներկայացրած ծրագրի՝ Անին պլանավորում էր օրգանական եղանակով մշակել ոչ ավանդական մշակաբույսեր՝ ռուկոլա, քեյլ, իտալական դաղձ, իտալական բազիլիկ, ռոզմարին, խնկունի:

«Գիտեի, որ այդ մշակաբույսերն անծանոթ են մեր սպառողին, սակայն որքան էլ ռիսկային լիներ, որոշեցի մշակել,- պատմում է Անին: - Հիշում եմ, երբ Հայաստանում սկսեցին բրոկոլի մշակել, շատերն այն անհամ էին համարում, սակայն այսօր բնակչության 70-80%-ը օգտագործում է այն: Նույնն ասում էին ռուկոլայի մասին, թե այն սպառում չի ունենա, սակայն որոշեցի ինքս համոզվել, և պարզվեց, որ ուրիշի կարծիքներով չպետք է առաջնորդվել»:

Սեփական արտադրանքի մասին հայտարարությունը Անին տեղադրեց իր ֆեյսբուքյան հարթակում՝ Greendream անվան տակ, հետագայում EU-GAIA ծրագրի աջակցությամբ վերաբրենդավորումից հետո այն կոչվեց Greenmood: Փոխվեց ոչ միայն անվանումը, այլև տարբերանշանը և փաթեթավորումը: Ռեդբրենդինգի արդյունքում արտադրանքի սպառումն իրականացվում է նոր տարբերանշանով տպագրված հուսալի և էկոլոգիապես մաքուր կրաֆթ թղթե տոպրակներով:

«Շատ եմ հավանում Ավստրիական զարգացման գործակալության ծրագիրը, քանի որ այն աջակցում է ոչ միայն ֆինանսապես, այլև նպաստում դասընթացների միջոցով բիզնեսի կայացմանը և գրագետ կառավարմանը, բարձրացնում արտադրանքի, ապրանքանիշի ճանաչելիությանը՝ կազմակերպելով գյուղմթերքների փառատոներ»,- ասում է Անին:

Ջերմատան կից տարածքը նպատակային օգտագործելու համար Անին ստեղծել է տարբեր տնկարաններից ձեռք բերած խնձորենու, նշենու, ընկուզենու, պնդուկենու տնկիներով գեղեցիկ այգի, որը դեռևս ոռոգվում է խողովակաշարով բերած ջրով, իսկ հաջորդ տարի կփոխարինվի ոռոգման կաթիլային համակարգով:

Անիի երազանքը միայն ջերմատնով ու այգիով չի սահմանափակվում: Նա նախատեսում է զարգացնել գյուղական զբոսաշրջությունը: Այդ նպատակով ջերմատան տարածքում արդեն իսկ տեղադրել է տնակ, որը հետագայում կդառնա թեյարան:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ANNA VIRABYAN

"Participate, try your hand at different programs."

Forty-two-year-old Anna Virabyan, a resident of Khashtarak village, Tavush Marz, has been growing traditional and non-traditional crops for more than 20 years. She is actively involved in various programs related to the agricultural sector, and in recent years, she has closely been cooperating with the "Green Agriculture Initiative (EU-GAIA)" project, which is co-financed by the European Union and the Austrian Development Cooperation.

Anna, who specialized as a nurse and also as an accountant, is sure that regardless of specialization, living in a village, you simply cannot help doing agriculture. She says that she chose the first profession at the request of her parents, and the second one based on market demand. However, over time she has come to focus on agricultural work, which provides employment throughout the year.

Now Anna has the opportunity to fully use a greenhouse with an area of 440 square meters provided by the EU-GAIA project, which is equipped with a drip irrigation network and a solar system.

"Our land plot was in a place where irrigation water did not reach, which is why we could not cultivate the land for years," she recalls, "I applied for the program in order to build a greenhouse with a solar system and drip irrigation so that I could engage in sustainable and green agriculture. Thanks to the EU-GAIA project, we have made the unused plot of land cultivated and profitable for us."

Within the framework of the program, Anna also participated in six-month courses and experience exchange visits, and she considers the experience and partnership connections gained during these activities her greatest achievement.

"We learned so much during those courses that I have so far managed to apply only a small part of the experience I have gained in the greenhouse," she says.

She emphasizes that the availability of a greenhouse with innovative approaches has allowed to minimize agricultural risks and avoid such large-scale damages as fellow villagers experience when cultivating agricultural products in the open field.

Anna's successful greenhouse experience has also inspired the women in the village. They often turn to Anna for advice not only on innovative agriculture, but also on information on agricultural programs and grant competitions.

"When they see that I am growing, selling, and getting income, they get excited and want to succeed too. I try to be useful to them to the best of my ability," says Anna.

ԱՆՆԱ ՎԻՐԱԲՅԱՆ

«Մասնակցե՛ք, փորձե՛ք ձեր ուժերը տարբեր ծրագրերում»

Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի բնակիչ 42-ամյա Աննա Վիրաբյանն ավելի քան 20 տարի է, զբաղվում է ավանդական ու ոչ ավանդական մշակաբույսերի աճեցմամբ: Ակտիվորեն ներգրավված է գյուղատնտեսության ոլորտին վերաբերող տարբեր ծրագրերում, իսկ վերջին տարիներին սերտորեն համագործակցում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի հետ:

Բուժքրոջ, ապա նաև հաշվապահի մասնագիտացում ստացած Աննան վստահ է՝ անկախ մասնագիտացումից, գյուղում ապրելով ուղղակի չես կարող գյուղատնտեսությամբ չզբաղվել: Այժմ Աննան հնարավորություն ունի լիարժեք օգտագործելու EU-GAIA ծրագրով հատկացված 440 քմ տարածքով ջերմոցը, որն ապահովված է կաթիլային ոռոգման ցանցով, արևային համակարգով:

«Մեր հողակտորն այնպիսի տեղում էր, որտեղ ոռոգման ջուրը չէր հասնում, ինչի պատճառով տարիներ շարունակ չէինք կարողանում հողը մշակել,- հիշում է նա,- ծրագրին դիմել էի արևային համակարգով, կաթիլային ոռոգմամբ ջերմատուն կառուցելու նպատակով, որպեսզի կարողանայի զբաղվել կայուն ու կանաչ գյուղատնտեսությամբ: EU-GAIA ծրագրի շնորհիվ մինչ այժմ չօգտագործվող հողակտորը դարձրել ենք մշակովի ու եկամտաբեր մեզ համար»:

Ծրագրի շրջանակներում Աննան նաև վեցամսյա դասընթացների ու փորձի փոխանակման այցերի է մասնակցել, ինչի ընթացքում ստացած փորձառությունն ու գործընկերային կապերը համարում է իր ամենամեծ ձեռքբերումը:

«Այդ դասընթացների ընթացքում այնքան շատ բան ենք սովորել, որ դեռևս ստացած փորձառության մի փոքրիկ մասն եմ հասցրել ջերմոցում կիրառել,- ասում է նա:

Շեշտում է՝ նորարար մոտեցումներով ջերմոցի առկայությունը թույլ է տվել նվազագույնի հասցնել գյուղատնտեսական ռիսկերն ու խուսափել այնպիսի մեծածավալ վնասներից, որոնք համագյուղացիներն ունենում են բաց դաշտում գյուղմթերք մշակելիս:

Աննայի ջերմոցային հաջողված փորձառությունը ոգեշնչել է նաև գյուղի կանանց: Նրանք հաճախ են դիմում Աննային՝ ակնկալելով խորհուրդներ ոչ միայն նորարար գյուղատնտեսության, այլև՝ գյուղատնտեսական ծրագրերի ու դրամաշնորհների մասին տեղեկատվության փոխանցման առումով:

«Երբ տեսնում են, որ աճեցնում, վաճառում, եկամուտ եմ ստանում, իրենք էլ են ոգևորվում, իրենք էլ են ուզում հաջողել: Ես էլ փորձում եմ օգտակար լինել նրանց՝ ուժերիս ներածին չափով»,- նշում է Աննան:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ESTHER GRIGORYAN

"Every risk in agriculture should be turned into an opportunity"

Struggling with nature, Esther and Ashot Grigoryan, residents of Saratak, Shirak Marz, create crops in the rocky soil, they don't complain about difficulties, they do their work silently. Ashot is a military aviation equipment engineer with the rank of aviation major, Esther is a teacher by profession and works in the field of civil society, they have two sons. Based on the needs of the family, the young couple, after long discussions, decided to turn their 2,000 square meter homestead into an apple orchard.

According to Esther, although agriculture is a risky business, every risk should be turned into an opportunity. With this principle, the couple expanded and qualitatively improved the garden.

"I think everything is possible, nothing is impossible. It is true, in the beginning, we distributed the harvest to friends and acquaintances because there was no refrigerator to store the food, the harvest could spoil. However, our activities were further expanded thanks to presently one of the largest programs in the field of agriculture in Armenia, the "EU Green Agriculture Initiative (EU-GAIA) in Armenia" project," says Esther.

The couple found out about the project on the Internet, submitted an application for participation, and became a beneficiary of the project. After that, Ashot and Esther set about expanding the garden. The 250 apple trees in the garden were increased by another 250. In 2021, with the support of the project, a refrigerator and a solar panel were purchased, which the couple needed so much.

Today, the products of the garden are sold with their own design, logo, and packaging, presenting themselves under the "Arevaigi" brand, which is also one of the achievements of the EU-GAIA project.

One of of Esther ' s further projects is development of agro-tourism in Saratak. According to Esther, this form of tourism gives tourists the opportunity to enjoy ecologically clean food, get to know rural life, and the process of processing and producing agricultural products. With another project, Esther and Ashot intend to establish a production of apple juice, jam, compote under the same "Arevaigi" brand.

"It seems to me that those ideas are successful that are implemented, regardless of this or that support, mainly thanks to hard work and persistence. Our resource is the land and the garden created on it, which will later be expanded with other fruit trees. Then, time itself will dictate the next step, and new ideas will be born that will significantly improve our lives and the community's life in general," says Esther.

ԵՍԹԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Գյուղատնտեսության մեջ յուրաքանչյուր ռիսկ պետք է դարձնել հնարավորություն»

Բնության հետ կռիվ տալով քարքարոտ հողում բերք ու բարիք են ստեղծում Շիրակի մարզի Սարատակի բնակիչներ Եսթեր և Աշոտ Գրիգորյանները, դժվարություններից չեն բողոքում, լուռ իրենց գործն են անում: Աշոտը ռազմական ավիացիայի սարքավորումների ինժեներ է, կոչումով ավիացիայի մայոր, Եսթերը մասնագիտությամբ մանկավարժ է և աշխատում է քաղաքացիական հասարակության ոլորտում, ունեն երկու որդի: Ընտանիքի կարիքներից ելնելով երիտասարդ ամուսինները երկար քննարկումներից հետո որոշեցին շուրջ 2000 քմ մակերեսով տնամերձը վերածել խնձորի այգու:

Տնամերձն ազատելով քարերից՝ փխրեցրեց հողը հումուսով, ձեռք բերեց տնկիներ ու կարճ ժամանակ անց քարքարոտ հողատարածքը վերածվեց մատղաշ այգու: Եսթերի խոսքով թեև գյուղատնտեսությունը ռիսկային ոլորտ է, այդուհանդերձ յուրաքանչյուր ռիսկ պետք է հնարավորություն դարձնել: Այս սկզբունքով էլ ամուսիններն ընդարձակում ու որակապես բարելավում էին այգին:

«Ես կարծում եմ՝ ամեն ինչ հնարավոր է, անհնարին ոչինչ չկա: Ճիշտ է, սկզբնական շրջանում ստացածբերքը բաժանում է ինք ծանոթ-բարեկամներին, քանի որ մթերքը պահելու համար սառնարան չկար, բերքը կարող էր փչանալ: Սակայն մեր գործունեությունն ավելի ընդլայնվեց ներկայումս Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի ամենախոշոր ծրագրերից մեկի՝ ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագրի (EU-GAIA) շնորհիվ»,- պատմում է Եսթերը:

Ծրագրի շահառու դառնալուց հետո Աշոտն ու Եսթերը ձեռնամուխ եղան այգու ընդարձակմանը: Այգում եղած 250 խնձորենուն ավելացավ ևս 250-ը: 2021 թվականին ծրագրի աջակցությամբ ձեռք բերեցին սառնարան և արևային մարտկոց, ինչի կարիքն ամուսիններն այդքան ունեին: Այսօր այգու արտադրանքը սեփական դիզայնով, տարբերանշանով, փաթեթավորմամբ է վաճառքի հանվում՝ ներկայանալով «Արևայգի» բրենդով, ինչը նույնպես EU-GAIA ծրագրի ձեռքբերումներից է:

Եսթերի հետագա նախագծերից է Սարատակում ագրոտուրիզմի զարգացումը: Նրա համոզմամբ՝ տուրիզմի այս ձևը զբոսաշրջիկներին հնարավորություն է տալիս վայելելու էկոլոգիապես մաքուր սնունդ, ծանոթանալու գյուղական կյանքին, գյուղմթերքների մշակման և արտադրության գործընթացին: Մեկ այլ նախագծով Եսթերն ու Աշոտը մտադիր են հիմնել խնձորի հյութի, ջեմի, կոմպոտի արտադրություն, նույն՝ «Արևայգի» ապրանքանիշով:

«Ինձ թվում է՝ հաջողվում են այն գաղափարները, որոնք անկախ այս կամ այն աջակցությունից իրականացվում են հիմնականում աշխատասիրության, համառության շնորհիվ: Մեր ռեսուրսը հողն է ու նրա վրա ստեղծված այգին, որն հետագայում կընդարձակվի այլ մրգատու ծառերով: Հետո ժամանակն ինքը կթելադրի հաջորդ քայլը, ու կծնվեն նոր գաղափարներ, որոնք էականորեն կբարելավեն մեր և առհասարակ համայնքի կյանքը»,- ասում է Եսթերը:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

GOHAR ASLIKYAN

"Dealing in green agriculture is not only useful, but also profitable."

Having studied in Yerevan for about 7 years, Gohar Aslikyan, a specialist in education management, decided years ago to return to her native village, Berdavan, and contribute to the development of the potential of the youth of the border community. Support from the Austrian Development Agency's *Green Agriculture Initiative* (EU-GAIA) program helped the young agriculturist realize her goals.

In 2021, Gohar Aslikyan, together with her fellow villagers, founded the "Berdavan" charitable foundation in order to more systematically and efficiently implement programs aimed at the development of the village and the activation of community life. Along with that, she also coordinates the educational programs of the "KASA" charitable foundation. In addition, she is actively engaged in agriculture.

Only recently, G. Aslikyan thought about the need for support in turning agriculture into a business project and decided to apply for the grant competition of *the Green Agriculture Initiative* (EU-GAIA) program co-financed by the European Union and Austrian Development Cooperation.

"I really do want to live in Berdavan, and it was from that desire that the idea of turning agriculture into a business was born, which will give me the opportunity to live and work in the village," says the young agriculturist.

The basis for Gohar's business idea is the establishment of a cornel orchard with DEMO - hail protection nets and drip irrigation. The orchard's business plan will also have an educational component: local schoolchildren, youth and women will be introduced to the effectiveness of using innovative gardening approaches. According to her observation, green agriculture can also become a means of ensuring financial stability and connecting the villager with the village.

According to G. Aslikyan, the approach of the EU-GAIA program can be exemplary for international and state institutions in this respect.

"It takes a certain period for the farmer involved in the support program to reach a certain point, after which she can move forward without the support of state or international structures. With this program, everything is planned so that the farmer does not think about purchasing agricultural equipment or property, additional reports and other hassles, but focuses on ensuring the efficiency of agricultural work. The program also plans visits to exchange practical experience not only within Armenia, but also abroad. This is a unique opportunity for us," Aslikyan says.

ԳՈՀԱՐ ԱՍԼԻԿՅԱՆ

«Կանաչ գյուղատնտեսությամբ զբաղվելը ոչ միայն օգտակար է, այլև՝ շահավետ»

Շուրջ 7 տարի Երևանում ուսանած, կրթության կառավարման ոլորտի մասնագետ Գոհար Ասլիկյանը տարիներ առաջ է որոշել վերադառնալ հայրենի գյուղ՝ Բերդավան, ու նպաստել սահմանամերձ համայնքի երիտասարդների ներուժի զարգացմանը: Ավստրիական զարգացման գործակալության՝ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրով ստացված աջակցությունն օգնեց երիտասարդ գյուղատնտեսին իրականացնել իր նպատակները:

2021 թվականին Գոհար Ասլիկյանը համագյուղացիների հետ միասին հիմնում է «Բերդավան» բարեգործական հիմնադրամը, դրա հետ մեկտեղ համակարգում է նաև «ԿԱԶԱ» բարեգործական հիմնադրամի կրթական ծրագրերը: Բացի այդ, ակտիվորեն զբաղվում է նաև գյուղատնտեսությամբ: Գյուղատնտեսությունը բիզնես նախագծի վերածելու հարցում աջակցության անհրաժեշտության մասին Գ. Ասլիկյանը մտածել է միայն վերջերս ու որոշել դիմել Եվրամիության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի դրամաշնորհային մրցույթին:

«Ես շատ եմ ուզում ապրել Բերդավանում, ու հենց այդ ցանկությունից ծնվեց գյուղատնտեսությունը բիզնես դարձնելու գաղափարը, որն ինձ գյուղում ապրելու ու արարելու հնարավորություն կտա.» - ասում է երիտասարդ գյուղատնտեսը:

Գոհարի բիզնես գաղափարի հիմքում դեմո՝ կարկտապաշտպան ցանցերով ու կաթիլային ոռոգմամբ հոնի պտղատու այգու հիմնումն է: Այգու բիզնես ծրագիրն ունենալու է նաև կրթական բաղադրիչ. տեղի դպրոցականներին, երիտասարդներին ու կանանց ներկայացվելու է այգեգործության նորարար մոտեցումների կիրառման արդյունավետությունը:

Նրա դիտարկմամբ՝ կանաչ գյուղատնտեսությունը կարող է դառնալ նաև ֆինանսական կայունության ապահովման ու գյուղացուն գյուղին կապելու միջոց:

Գ. Ասլիկյանի կարծիքով այս առումով այլ միջազգային ու պետական կառույցների համար օրինակելի կարող է լինել հենց EU-GAIA ծրագրի մոտեցումը:

«Որոշակի շրջափուլ է պետք, որ աջակցության ծրագրում ներգրավված գյուղատնտեսը գա հասնի ինչ-որ մի կետի, որից հետո կարող է առանց պետական կամ միջազգային կառույցի աջակցության առաջ շարժվել: Այս ծրագրով ամեն ինչ պլանավորված է այնպես, որ ֆերմերը մտածի ոչ թե գյուղտեխնիկա կամ գույք ձեռք բերելու, հավելյալ հաշվետվությունների ու այլ քաշքշուկների մասին, այլ կենտրոնանա հենց գյուղատնտեսական աշխատանքի արդյունավետության ապահովման վրա: Ծրագիրը նաև գործնական փորձի փոխանակման այցեր է նախատեսում ոչ միայն Հայաստանի ներսում, այլև՝ արտերկրում: Սա բացառիկ հնարավորություն է մեզ համար»,- ասում է Ասլիկյանը:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ARUS GHAZARYAN

"If I could, surely you can too..."

Arus Ghazaryan was the first woman in the Deghdzavan community of Tavush Marz who four years ago made a decision to establish her own business and produce homemade preserves in factory conditions. At the most difficult stage of establishing a business, the Austrian Development Agency came to the aid of the entrepreneur with its Green *Agriculture Initiative* (EU-GAIA) program.

The decision of the Armenian language and literature teacher to engage in business was accepted by the family with confidence, but by the fellow villagers, with skepticism. However, today the fellow villagers are proud of both the woman entrepreneur and the existence of the local production facility.

"For the first time, a production facility was opened in the village, and the name Deghdzavan is also mentioned when mentioning our company on various occasions," says Arus Ghazaryan.

Within the framework of the EU-GAIA program, Arus Ghazaryan received a solar system, a production autoclave, a cooking pot and a packaging machine. Thanks to the continuous support of the Austrian Development Agency, the young entrepreneur also acquired new skills and knowledge, participated in various expos and events, as well as received an exclusive opportunity for branding...

As a result, today, Arus has a stable production, producing eight types of stewed fruit, three types of jam, as well as canned olives under the Hayq food brand. Only last year she procured and canned one ton of olives, this year she intends to increase it to 3-4 tons. For future, it is planned to use the waste obtained in the canning process as secondary raw material and continue the production chain with the production of olive oil.

In order to obtain quality products compatible with green agriculture, A. Ghazaryan, who is cooperating with about 200 beneficiaries, urges fellow villagers to get the fruit naturally and not to use various chemical additives in the processing process. She says that her exhortation and explanatory works are already bearing fruit, as a result of which she has the opportunity to stock up on healthy food and offer quality products to the customer.

"If we can avoid using additives and get healthy food, why not?" she says.

A female entrepreneur who overcame the most difficult years of establishing a business tries to inspire other women by her example. She says that women are afraid that they may not succeed. In such cases, her reaction is one, *"if I could, surely you can too."*

ԱՐՈՒՍ ՂԱԶԱՐՅԱՆ

«Եթե ես կարողացել եմ, հաստատ դուք էլ կկարողանաք...»

Արուս Ղազարյանը Տավուշի մարզի Դեղձավան համայնքում առաջին կինն էր, որը չորս տարի առաջ որոշեց հիմնել իր սեփական բիզնեսն ու տանը պատրաստվող պահածոներն արտադրել գործարանային եղանակով: Բիզնեսի կայացման ամենադժվար փուլում երիտասարդ գործարարին օգնության էր հասել Ավստրիական զարգացման գործակալությունը՝ «Կանաչ գյուղատնտեսությանն նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրով:

Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհու՝ գործարարությամբ զբաղվելու որոշումը ընտանիքը վստահությամբ, իսկ համագյուղացիները՝ թերահավատորեն են ընդունել: Սակայն այսօր համագյուղացիները հպարտանում են թե՛ կին գործարարով, թե՛ տեղական արտադրամասի գոյությամբ: «Առաջին անգամ գյուղում արտադրամաս է բացվել, տարբեր առիթներով մեր ձեռնարկության մասին հիշատակելիս ինչեցվում է նաև Դեղձավան անունը»,- նշում է նա:

EU-GAIA ծրագրի շրջանակում Արուս Ղազարյանը ստացավ տեխնիկական աջակցություն՝ արևային համակարգ, արտադրական ավտոկլավ, եփման կաթսա ու փաթեթավորման սարք: Երիտասարդ ձեռներեցը Ավստրիական զարգացման գործակալության շարունակական աջակցության շնորհիվ ձեռք է բերել նաև նոր հմտություններ ու գիտելիքներ, մասնակցել տարբեր էքսպոների ու միջոցառումների, ինչպես նաև ստացել ապրանքանիշը բրենդավորելու բացառիկ հնարավորություն...

Արդյունքում՝ Արուսն այսօր կայուն արտադրություն է ապահովում՝ արտադրելով Hayq food ապրանքանիշով 8 տեսակի կոմպոտ, 3 տեսակի մուրաբա, ինչպես նաև պահածոյացված ձիթապտուղ: Միայն անցած տարի մթերել ու պահածոյացրել է 1 տոննա ձիթապտուղ, այս տարի մտադիր է այն հասցնել 3-4 տոննայի: Առաջիկա պլաններով նախատեսում է պահածոյացման գործընթացում ստացված թափոնները որպես երկրորդային հումք օգտագործել ու շարունակել արտադրական շղթան ձիթապտղի բուսայուղի արտադրությամբ:

Որակյալ ու կանաչ գյուղատնտեսությանը համահունչ արտադրանք ստանալու նպատակով շուրջ 200 շահառուների հետ համագործակցող Արուս Ղազարյանը գործընկեր գյուղացիներին հորդորում է միրգն ստանալ բնական եղանակով, մշակության ընթացքում չօգտագործել տարբեր քիմիական հավելանյութեր: Ասում է՝ իր հորդորն ու բացատրական աշխատանքներն արդեն պտուղներ են տալիս, ինչի արդյունքում հնարավորություն է ունենում մթերել առողջ մթերք ու որակյալ արտադրանք առաջարկել հաճախորդին:

«Եթե կարող ենք հավելանյութեր չօգտագործել ու առողջ սնունդ ստանալ, ինչո՞ւ չանենք»,- նշում է նա:

Բիզնեսի կայացման ամենադժվար տարիները հաղթահարած կին գործարարն իր օրինակով փորձում է ոգեշնչել նաև այլ կանանց: Ասում է՝ կանանց մեջ մտավախություն կա, թե կարող է չհաջողվել: Նման դեպքերում իր արձագանքը մեկն է. «Եթե ես կարողացել եմ, հաստատ դուք էլ կկարողանաք»:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

SONICHKA BAYRAMYAN

"Dealing in green agriculture is not only useful, but also profitable."

Sixty-nine-year-old Sonichka Bayramyan is from Voskepar village of Tavush Marz. The distinguished teacher who taught chemistry and biology in the village school all her life is also an experienced agriculturist. Today, she is one of the staunch supporters of the introduction of innovative methods in agriculture and is particularly proud to present her greenhouse recently launched with the support of the *Green Agriculture Initiative Armenia* (EU-GAIA) program co-financed by the European Union and the Austrian Development Cooperation.

Within the farmework of the EU-GAIA program Bayramyan received the technical support in the form of a 130 square meter greenhouse equipped with ventilation and drip irrigation systems, a 7 kW solar system and a small motor block intended for soil cultivation.

The example of that greenhouse aimed at the development of green agriculture has inspired many people in the village. Some are interested in similar programs with the desire to apply in the future, some have begun to appreciate green agricultural products more and prefer to shop not at the markets of Noyemberyan or Ijevan, but at the Bayramyans' greenhouse, and some simply apply to the innovative agriculturist in the hope of getting to know the nuances of running green and healthy agriculture.

The successful farmer in her turn tries to be useful to her fellow villagers. Aid is sometimes also in-kind, in the form of greenhouse-grown seedlings or crops.

"This year, for example, the hail destroyed the seedlings of the villagers. Since our greenhouse was not damaged by the hail, I gave the vegetable seedlings I grew to the whole village free of charge," says S. Bayramyan.

She is certain that there is a need for agricultural development programs and green farming skills in all the villages of the republic, but they are of the most vital importance for the borderline and frontier settlements.

The distinguished educator and innovative agriculturist, who became the senior adviser to the women of the village, says that the most important thing for the farmer and agriculture is to do everything on time.

"If you leave today's work for tomorrow, you will not have a harvest tomorrow either. Everything should be done on time. It is not for nothing that the popular saying says: one spring day feeds a year."

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ՍՈՆԻՉԿԱ ԲԱՅՐԱՄՅԱՆ

«Եթե այսօրվա գործը վաղվան թողեցիր, վաղն էլ բերք չես ունենա»

69-ամյաՍոնիչկա Բայրամյանը Տավուշի մարզի Ոսկեպար գյուղից է: Ողջ կյանքը գյուղի դպրոցում քիմիա և կենսաբանություն դասավանդած վաստակաշատ ուսուցչուհին նաև փորձառու գյուղատնտես է: Այսօր նա գյուղատնտեսության մեջ նորարար եղանակների ներդրման հավատարիմ ջատագովներից է և առանձնահատուկ հպարտությամբ է ներկայացնում Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի աջակցությամբ վերջերս գործարկված իր ջերմոցը...

Ծրագրի կողմից Բայրամյանը ստացել է նաև տեխնիկական աջակցություն՝ օդափոխության ու կաթիլային ոռոգման համակարգերով հագեցած 130 քմ տարածքով ջերմոցի, 7 կվտ հզորությամբ արևային համակարգի ու հողի մշակման համար նախատեսված փոքր մոտոբլոկի տեսքով:

Կանաչ գյուղատնտեսության զարգացմանը միտված այդ ջերմոցի օրինակը գյուղում շատերին է ոգեշնչել: Ոմանք հետաքրքրվում են նմանատիպ ծրագրերով հետագայում դիմելու ցանկությամբ, ոմանք սկսել են ավելի գնահատել կանաչ գյուղմթերքն ու նախընտրում են գնումներ կատարել ոչ թե Նոյեմբերյանի կամ Իջևանի շուկաներից, այլ՝ Բայրամյանների ջերմոցից, ոմանք էլ ուղղակի դիմում են նորարար գյուղատնտեսին՝ կանաչ ու առողջ գյուղատնտեսության վարման նրբություններին ծանոթանալու ակնկալիքով:

Վաստակաշատ գյուղատնտեսն իր հերթին փորձում է օգտակար լինել համագյուղացիներին: Օգնությունը երբեմն նաև առարկայական է լինում՝ ջերմոցում աճեցրած սածիլների կամ բերքի տեսքով:

«Այս տարի, օրինակ՝ կարկուտը ոչնչացրել էր գյուղացիների սածիլները: Քանի որ կարկուտը մեր ջերմոցին վնաս չէր տվել, ողջ գյուղին իմ աճեցրած բանջարեղենի սածիլներն անվճար տրամադրեցի»,- պատմում է Ս. Բայրամյանը:

Համոզված է՝ գյուղատնտեսական զարգացման ծրագրերի և կանաչ գյուղատնտեսության հմտությունների կարիք հանրապետության բոլոր գյուղերում էլ կա, սակայն սահմանամերձ ու սահմանապահ բնակավայրերի համար դրանք առավել կենսական նշանակություն ունեն: Գյուղի կանանց ավագ խորհրդատուն դարձած վաստակաշատ մանկավարժն ու նորարար գյուղատնտեսն ասում է՝ գյուղացու ու գյուղատնտեսության համար ամենակարևորն ամեն ինչ ժամանակին անելն է.

«Եթե այսօրվա գործը վաղվան թողեցիր, ապա վաղը էլ բերք չես ունենա: Ամեն ինչ պետք է արվի իր ժամանակին: Ժողովրդական խոսքն իզուր չի ասում՝ գարնան մեկ օրը տարի է կերակրում»:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ANAHIT HARUTIUNYAN

"When you trust your strength and have a purpose..."

According to Anahit Harutiunyan, the owner of the *Sunny Food* canned goods production in the Gharibjanyan community of Shirak Marz, their business is based on the principles of green agriculture: they create new good by using nature's harvest and wealth, without harming nature and sparingly using water and energy resources.

The Harutiunyan family entrusted Anahit with the management of the canned food factory, which was founded in the early 2000s and operates intermittently, when she was only 19 years old.

The Green Agriculture Initiative in Armenia (EU-GAIA) project, co-financed by the European Union and the Austrian Development Cooperation, is becoming a turning point to re-equip and restart the factory.

"When we noticed the phrase "green agriculture" in the announcement, we understood that it was about us. We use local fruits and vegetables produced by the farmers, returning the waste from their processing (fruit and vegetable peels, fruit pulp, etc.) to them for use as fodder or natural fertilizer. In order to efficiently use the water used in the processing process, we direct it to the irrigated areas", says Anahit and notes "for small countries like Armenia, I think it is very important to ensure multiple use of raw materials and sparing use of natural resources.

Within the framework of "The Green Agriculture Initiative in Armenia" project *Sunny Food* received support not only in the form of a solar system, refrigerators, but also automatic labeling equipment.

The solar system received as technical support almost completely meets the energy needs of the factory, contributing to the introduction of green agriculture and innovative approaches, and the presence of refrigerators makes it possible to store up and preserve the useful properties of the stocked fruits and vegetables in the long term.

Highlighting the victory achieved with the grant program, Anahit emphasizes that thanks to the program, they received more than just technical support.

"The program has given us a lot of motivation to restart and expand the business in the borderline rural area. It gave us hope to start all over again, to develop our business with new momentum and in a more efficient way."

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Երբ վստահում ես ուժերիդ ու ունես նպատակ...»

Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքում էկոլոգիապես մաքուր, առանց քիմիական հավելումների և ներկանյութերի Sunny Food ապրանքանիշի պահածոների արտադրամասի սեփականատեր Անահիտ Հարությունյանի ներկայացմամբ՝ իրենց բիզնեսը կանաչ գյուղատնտեսության սկզբունքների վրա է հիմնված՝ նոր բարիք են ստեղծում՝ օգտագործելով հողի պարգևած բերքն ու պտուղը, վնաս չհասցնելով բնությանը և խնայողաբար օգտվելով ջրային և էներգետիկ ռեսուրսներից:

Դեռևս 2000-ականների սկզբին հիմնադրված, պարբերական դադարներով գործած պահածոների արտադրամասի կառավարումը Հարությունյանների ընտանիքն Անահիտին է վստահել, երբ նա ընդամենը 19 տարեկան էր:

Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագիրը դառնում է շրջադարձային՝ արտադրամասը վերազինելու ու վերագործարկելու համար:

«Երբ հայտարարությանը մեջ նկատեցինք «կանաչ գյուղատնտեսություն» արտահայտությունը, հասկացանք, որ դա հենց մեր մասին է: Մենք օգտագործում ենք գյուղացիների արտադրած տեղական պտուղ-բանջարեղենը՝ դրանց վերամշակման արդյունքում առաջացած թափոնները (մրգի և բանջարեղենի կլեպը, մրգային խյուսը և այլն) վերադարձնելով նրանց՝ որպես անասնակեր օգտագործելու կամ բնական պարարտանյութ ստանալու համար: Վերամշակման ընթացքում օգտագործվող ջուրն իզուր չվատնելու նպատակով այն ուղղում ենք դեպի ոռոգվող տարածքներ,- պատմում է Անահիտն ու նկատում,- Հայաստանի նման փոքր երկրների համար, կարծում եմ, շատ կարևոր է հումքի բազմակի ու բնական ռեսուրսների խնայողական օգտագործումը»:

«Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագրի շրջանակում Sunny Food-ն աջակցություն է ստանում ոչ միայն արևային համակարգ տեղադրելու, սառնարանների, այլև մակնշման ավտոմատ սարք ձեռք բերելու համար:

Անահիտն նկատում է՝ ծրագրի շնորհիվ ստացել են ավելին, քան միայն տեխնիկական աջակցությունն է:

«Ծրագիրը մեզ շատ մեծ մոտիվացիա է տվել սահմանամերձ գյուղական բնակավայրում բիզնեսը վերագործարկելու և ընդլայնելու առումով: Այն մեզ տվել է հույս՝ ամեն ինչ նորից սկսելու, նոր թափով ու ավելի արդյունավետ ձևով մեր բիզնեսը զարգացնելու համար»:

Austrian Development Cooperation

Austrian Development Agency

LILIT MISAKYAN

"Through the children, the community too can see the advantages of green agriculture."

The intensive garden next to the secondary school of Balahovit community of Kotayk Marz is the place that unites the entire student body and teaching staff of the educational institution around innovative ideas of agricultural management. Created by the initiative of director Lilit Misakyan and with the support of the UN World Food Program (WFP), this garden gives students the opportunity not only to directly participate in the cultivation of agricultural products, to acquire the skills of growing crops in modern ways, and to get acquainted with the entire production process, but also to see with their own eyes all the advantages of green agriculture.

According to the director, the first harvest of the intensive garden - vegetables / cucumbers, tomatoes, broccoli, okra, beetroot / was received in 2021, and this year mainly raspberries and blackberries are cultivated, which, like vegetables, are ecologically pure agricultural products. Students learn how to properly and competently cultivate soil to produce organic food. Bio-humus, obtained from Californian red worms, provided to the school by the World Food Program is used instead of the previously used pesticides and fertilizers.

The "Young Naturalist's Club" is also a part of the cheerful daily life of the school, where the students apply the knowledge they have acquired about natural science and green agriculture not only during the cultivation of the garden, but also to change the culture in the community. Children understand very well the advantages of ecologically pure food, they distinguish it from natural products sold in shopping centers, and naturally, they prefer food grown by themselves, transferring this aspiration to the family.

The innovative approaches and technologies used in the school gardens are not only educational, but also exciting and motivating in choosing a future profession.

"The process of creating an intensive garden not only taught to understand the language of the land, but also educated the children, their parents and the community with the knowledge of modern technologies, which are necessary to develop clean, green and intensive agriculture in Armenia. Do you know what was especially gratifying? The elderly people of the village were constantly watching our work from beyond the school fence and admiring how we turned the uncultivated and arid land into a green garden and flower-bed with our efforts," says Lilit Misakyan.

ԼԻԼԻԹ ՄԻՍԱԿՅԱՆ

«Երեխաների միջոցով համայնքն էլ է տեսնում կանաչ գյուղատնտեսության առավելությունները»

Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի միջնակարգ դպրոցին կից ինտենսիվ այգին այն վայրն է, որը միավորում է կրթօջախի ողջ աշակերտական և ուսուցչական կազմը գյուղատնտեսություն վարելու նորարար գաղափարների շուրջ: Տնօրեն Լիլիթ Միսակյանի նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) աջակցությամբ ստեղծված այգին հնարավորություն է ընձեռում աշակերտներին ոչ միայն անմիջականորեն մասնակցելու գյուղմթերքի մշակմանը և ձեռք բերելու ժամանակակից եղանակներով մշակաբույսերի աճեցման հմտություններ, ծանոթանալ արտադրական ողջ գործընթացքն, այլ նաև սեփական աչքերով տեսնել կանաչ գյուղատնտեսության բոլոր առավելությունները:

Տնօրենի ներկայացմամբ՝ ինտենսիվ այգու առաջին բերքը՝ բանջարեղենը (վարունգ, լոլիկ, բրոկոլի, բամիա, բազուկ) ստացվեց 2021 թվականին, իսկ այս տարի հիմնականում մշակվում են մորի և մոշ, որոնք, ինչպես և բանջարեղենը էկոլոգիապես մաքուր գյուղմթերքներ են: Աշակերտները սովորում են օրգանական մթերք ստանալու համար հողի և մթերքի ճիշտ և գրագետ մշակման եղանակները: Նախկինում օգտագործվող թունաքիմիկատների ու պարարտանյութերի փոխարեն կիրառվում է Պարենի համաշխարհային ծրագրի կողմից դպրոցին տրամադրված կենսահումուսը՝ ստացված կալիֆոռնիական կարմիր որդերից:

Դպրոցի հագեցած և լարված առօրյայի մաս է կազմում նաև «Պատանի բնագետի ակումբը», որտեղ աշակերտները բնագիտության, կանաչ գյուղատնտեսության վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները կիրառում են ոչ միայն այգու մշակման ժամանակ, այլև համայնքում մշակույթ են փոխում: Երեխաները շատ լավ հասկանում են էկոլոգիապես մաքուր սննդամթերքի առավելությունները, տարբերում են այն առևտրի կետերում վաճառվող բնամթերքից ու, բնականաբար, նախընտրում են իրենց ձեռքով աճեցրածը՝ այդ ձգտումը տեղափոխելով ընտանիք:

Դպրոցի այգիներում կիրառվող նորարարական մոտեցումներն և տեխնոլոգիաները ունեն ոչ միայն ուսուցողական նշանակություն, այլև ոգևորիչ և մոտիվացնող են հետագա մասնագիտություն ընտրելու հարցում:

«Ինտենսիվ այգու ստեղծման գործընթացը ոչ միայն սովորեցրեց հասկանալ հողի լեզուն, այլև միաժամանակ երեխաներին, նրանց ծնողներին և համայնքին կրթեց ժամանակակից տեխնոլոգիաների մասին գիտելիքներով, որոնք անհրաժեշտ են Հայաստանում մաքուր, կանաչ և ինտենսիվ գյուղատնտեսությունը զարգացնելու համար: Գիտեք՝ ինչն էր ոգեշնչող, որ գյուղի տարեցները դպրոցի ցանկապատից այն կողմ մշտապես հետևում էին մեր աշխատանքին ու հիանում, թե ինչպես մեր ջանքերով անմշակ ու անջրդի հողատարածքը վերածվեց կանաչ այգու և ծաղկանոցի»,- ասում է Լիլիթ Միսակյանը: